# ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ (1868—1919)*

**7048. ԱՄԵՆԱՅՆ Հայոց Վեհափառ կաթողիկոսի՝ վերջերս ստացած պաշտոնական նամակից քաղուածք:** [Կ. Պոլսի հայ մտավորականության, Արևմտյան Հայաստանի հայ բնակչության տեղահանումների, Վանի հայկական թաղամասերը, թուրք կառավարության կողմից, ռմբակոծելու, հրդեհելու և խուզարկումների մասին]: 1915, էջ 455—458:

**7049. ԱՐԱՄ:—Ազգիս Վեհափառ կաթողիկոսին ուղղած Արամի գրութիւնը:** [Վանից: Խնդրում է բարեգործական և մշակութային ընկերությունների միջոցով օգնություն կազմակերպել վասպուրականցի համար]: 1915, էջ 453—454:

**7050. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:**—[Կոնդակ: Բոլոր թեմերին և համայն հայությանը՝ հայ գաղթականների օգնության գործը կանոնավորելու համար Կովկասի քաղաքներում և գյուղերում գտնվող հանձնաժողովների, միությունների, ընկերությունների համագումար-ժողովի հրավիրում Էջմիածնում]: 1915, էջ 101—103:

**7051. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Լոնդոն: Նորին մեծութիւն թագաւորին Անգլիայի Գէորգ V-ի:** [Անհազանգող հեռագիր, եղեռնի առթիվ]: 1915, էջ 174:

**7052. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կահիրէ, Նորին գերազանցութիւն Պօղոս Փաշա Նուպարին:** [Հեռագիր: Իբրև կաթողիկոսի ներկայացուցիչ և նախագահ հայկական պատգամավորության, գործ դնել ամեն հնարավորը՝ ի պաշտպանություն հայ ժողովրդի Թուրքիայում]: 1915, էջ 175:

**7053. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ:** [Արևմտահայերի կոտորածների առթիվ կազմակերպել կարգադրիչ եղբայրական օգնության հանձնաժողովներ]: 1915, էջ 3—4:

**7054. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ:** [Բոլոր թեմերի առաջնորդներին՝ որպես քաջ հովիվ չհուսահատվել ժողովրդի անլուր տառապանքների առաջ, հուսադրել և կազմակերպել օգնության գործը]: 1915, էջ 803—806:

**7055. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ:** [Բոլոր թեմերին՝ արևմտահայության տարագրության առթիվ կազմակերպել եղբայրական օգնության տեղական հանձնաժողովներ և մասնախմբեր, հավաքված նվիրատվությունները ուղարկել Մայր Աթոռ «Եղբայրական օգնության կոմիտեի» անունով]: 1915. էջ 99—100:

**7056. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ:** [Պետերբուրգի քաղաքագլուխ կոմս Իվան Իվանովիչ Տոլստոյին և Պետական Դումայի մի շարք անդամներին՝ Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչության անլուր տառապանքների, կոտորածների առթիվ ռուս կառավարության և ժողովրդի մարդասիրական վերաբերմունքի, դրամական օգնության, 77.000 ռ., և նյութական այլ միջոցներով օգնելու առթիվ]: 1915, էջ 421—424:

**7057. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ:** [Պետրոգրադի քաղաքագլուխ կոմս Իվան Իվանովիչ Տոլստոյին և քաղաքային Դումային, հայ գաղթականության ֆոնդին 50.000 ռ. օգնելու առթիվ]: 1915, էջ 419—421:

**7058. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ:** [Ս. Էջմիածնի «Եղբայրական օգնության հանձնաժողովին»՝ ստույգ տեղեկագրեր պատրաստել արևմտահայության տարագրության մասին: Կազմակերպել շտապ օգնություն՝ Վասպուրականի, Մանազկերտի, Ալաշկերտի, Բասենի, Բաղեշի, Տարոնի և այլ վայրերի հայ գաղթականներին]: 1915, էջ 515—518:

**7059. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ:** [Ս. Էջմիածնի սինոդին և հոգևոր ատյաններին՝ պատմական այդ դժվար օրերին պահել ամուսնական և ամուսնալուծության հարցերում եկեղեցու կարգն ու ավանդությունները, տեղի չտալ մոլորություններին]: 1915, էջ 807—809:

**7060. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Հռոմ: Նորին մեծութիւն Վիկտոր Էմմանուել III-ին. թագաւորին Իտալիայի:** [Հեռագիր: Խնդրանք՝ պաշտպանել ամենահին քրիստոնյա մի ժողովրդի, հալածված անգթորեն և թողնված թուրք ֆանատիկոսության կատաղությանը]: 1915, էջ 172:

**7061. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Նորին բարձր գերազանցութիւն Արտաքին գործերի նախարար Սերգէյ Դիմիտրիեւիչ Սազանովին:** [Հեռագիր: Խնդրանք՝ պաշտպանել արևմտահայ դժբախտներին տանկական կոտորածներից]: 1915, էջ 171—172:

**7062. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Նորին վեհափառութեան տնօրէնութիւններից:** 1915, էջ 6—10, 104—124, 259—273, 424—434, 521—541, 680—716, 810—837:

**7063. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Վաշինգտոն: Պարոն նախարարին Ամերիկայի Միացեալ Նահանգների:** [Հեռագիր: Օգնություն հայ ժողովրդին Տանկաստանում՝ թողնված թուրքական ֆանատիկոսության կատաղության]: 1915, էջ 173:

**7064. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Վեհափառ Հայրապետի դիմումները:** [Օգնության հայցում արևմտահայերին տաճիկ կառավարության կոտորածներից ազատելու համար]: 1915, էջ 170—177:

Բովանդ.՝ **Նորին կայսերական մեծութեան Տ. Փոխարքայ կոմս Իլլարիօն Վորոնցով-Դաշկովին:—Պետրոգրադ՝ Նորին Բարձր Գերազանցութիւն արտաքին գործերի նախարար Սերգեյ Դիմիտրիեւիչ Սազանօվին:—Հռոմ՝ Նորին Մեծութիւն Վիկտոր Էմմանուէլ երրորդին, թագաւորին Իտալիայի:—Վաշինգտոն պարոն նախագահին՝ Ամերիկայի Միացեալ Նահանգների:—Փարիզ՝ պարոն նախագահին ֆրանսիական հանրապետութեան:—Լոնդոն՝ Նորին մեծութիւն թագաւորին Անգլիայի Գէորգ հինգերորդին:—Կահիրէ՝ Նորին գերազանցութիւն Պօղոս Փաշա Նուպարին:**

Նույն տեղում՝ ստացված պատասխանները:

**7065. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Փարիզ: Պարոն նախագահին ֆրանսիական հանրապետութեան:** [Հեռագիր: Խնդրանք բոլոր միջոցների գործադրությամբ փրկել անմեղ կոտորվող հայ քրիստոնյաներին]: 1915, էջ 173—174:

**7066. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Գրություն Ալեքսանդրիայի (Եգիպտոս) Հայուհյաց Կարմիր Խաչի ընկերության Ատենապետ Զարուհի Գալֆայանին՝ հայ կամավորների համար հայթայթած ներքնազգեստները Օդեսա և Բաթում ուղարկելու մասին]: 1915, էջ 430:

**7067. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Գրություն Դիվանին՝ քաջվաքնակ Համբարձում Ազարյանի՝ Վարդաշենի ծխական դպրոցին նվիրած 2500 ռ. տնօրինելու մասին]: 1915, էջ 275:

**7068. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Գրություն Դիվանին, Մայր Աթոռի թանգարանում պահել Միքայել արձանագործի «Վերք Հայաստանին Քանաքեռում» ռելիեֆպատկերը]: 1915, էջ 539:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1968 թ. №№ ԺԱ—ԺԲ-ից, 1969 թ. №№ Ա—Թ-ից և 1970 թ. №№ Ա—Բ-ից:

**7069. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Գրություն Լիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետին և Կտուց անապատի միաբան Ստեփան վարդապետին՝ վերադառնալ հայրենիք, ժողովել բոլոր ձեռագրերը և թանկարժեք հնությունները, ցուցակագրել ու ապահով ճանապարհով բերել ս. Էջմիածին, այնտեղ անկորուստ պահելու համար]։ 1915, էջ 811։

**7070. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Գրություն Մայր Աթոռի մատենադարանապետ Հուսիկ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանին՝ մատենադարանում պահելու Լիմ անապատի 17 կտոր ձեռագրերը]։ 1915, էջ 704։

Նույնը՝ Աղթամարի անապատի չորս թղթյա Ավետարանների մասին։ Էջ 704։

**7071. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Գրություն Մայր տաճարի լուսարարապետին՝ անկորուստ պահել Աղթամարից բերված մի փոքր սկիհ ոսկեզօծ մաղզմայով և մի փոքր մյուռոնաթափ և մի մեծ սկիհ ոսկեզօծ առանց մաղզմայի]։ 1915, էջ 704։

**7072. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Գրություն Սմբատ Տեր-Ավետիքյանին՝ ապահով ճանապարհով Էջմիածին փոխադրել Վանի և շրջակայքի ձեռագրերն ու այլ հնությունները]։ 1915, էջ 825։

**7073. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Գրություններ Էջմիածնի Եղբայրական Օգնության Գլխավոր կարգադրիչ Հանձնաժողովին, Երևանի փոխ-թեմակալին, Վրաստանի առաջնորդին, Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարչին, Ալեքսանդրապոլի, Ղարսի, Հին Նախիջևանի, Տաթևի, Նուխու, Ախալցխայի Հայոց հոգևոր կառավարություններին՝ վիճակագրական տեղեկություններ հաղորդել Արևմտահայաստանից գաղթած հայերի մասին]։ 1915, էջ 835։

**7074. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Դիվանի գրություններ՝ Երևանի, Վրաստանի, Շամախու, Աստրախանի, Ղարաբաղի թեմական առաջնորդներին, գանձանակ շրջեցնել կույրերի օգտին և հավաքված դրամը ուղարկել Կույրերի հոգաբարձության խորհրդին, որի նախագահն է կոմսուհի Ելիզավետա Վորոնցովան]։ 1915, էջ 276։

**7075. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Կոնդակ Ախալքալաքի գավառի Ջիկրաշեն գյուղում ծխական դպրոց բացելու առթիվ]։ 1915, էջ 268։

**7076. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Կոնդակ՝ Անանիա արքեպիսկոպոսին Մայր տաճարի լուսարարապետ նշանակելու և տաճարի զարդերը, անոթները ցուցակով նրան հանձնելու մասին]։ 1915, էջ 709։

Նույնի մասին սինոդի որոշումը՝ էջ 718։

**7077. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Կոնդակ՝ Գարեգին վարդապետ Հովսեփյանին Էջմիածնի եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի նախագահ նշանակելու մասին]։ 1915, էջ 709։

**7078. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Կոնդակ՝ Գարեգին վարդապետ Հովսեփյանին ճեմարանի տեսուչ նշանակելու մասին]։ 1915, էջ 427։

**7079. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Կոնդակ՝ Եվրոպայի հայոց թեմի առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Ութուճյանին, թեմում կազմակերպել օգնություն՝ ի նպաստ արևմտահայ գաղթականների]։ 1915, էջ 106—107։

Նույն տեղում նման բովանդակությամբ կոնդակներ Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ Արսեն վարդապետ Վեհունուն, Եգիպտոսի հայոց առաջնորդ Թորգոմ եպիսկոպոսին, Պարսկա-Հնդկաստանի թեմի հայոց առաջնորդին, Հնդկաստանի Կալկաթա և Չիչրա քաղաքների քահանաներին, Ռանգունի, Սինգապուրի, Սուրաբայի, Բաթավիայի, Ջավայի քահանաներին և նույն տեղերի հայ ազգային հասարակական կազմակերպություններին։

**7080. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Կոնդակ։ Երևանի փոխ-թեմակալ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի գլխավորությամբ կազմակերպել արևմտահայ գաղթականներին օգնող հանձնաժողով, տեղաբաշխել Երևանի նահանգի հայաբնակ գյուղերում]։ 1915, էջ 9։

**7081. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Կոնդակ՝ Էջմիածնի Եղբայրական Օգնության Գլխավոր Կարգադրիչ Հանձնաժողովին՝ Հայաստանի կենտրոնական տեղերում և քաղաքներում բացել հիվանդանոցներ, բուժարաններ, կազմակերպել բժշկական-առողջապահական միություններ՝ փախստական գաղթականներին կերակրելու համար հիմնել սննդատու կայաններ ապահովության դեպքում, փախստական-գաղթականներին վերադարձնել հայրենիք, վերակառուցելով նրանց քանդված գյուղերն ու տնտեսությունները]։ 1915, էջ 534։

**7082. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Կոնդակ Թիֆլիսի Հայկական Կենտրոնական Կոմիտեին, Պողոս Նուբար Փաշայի փոխադրած 20.000 ռ. տեղաբաշխել Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի, Նոր Բայազետի, Երևանի Եղբայրական օգնության հանձնաժողովներին]։ 1915, էջ 263։

**7083. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Կոնդակ՝ Հուսիկ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանին, տաճկահայ գաղթականների օգնության գործը կանոնավորելու մարտի 1-ի ս. Էջմիածնում կայանալիք հանձնաժողովների, ընկերությունների և հաստատությունների ներկայացուցիչների ժողովի նախագահ նշանակելու մասին]։ 1915, էջ 122։

**7084. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Կոնդակ՝ Ռումինիայի թաղական խորհուրդների, հոգաբարձությունների և ազգային հաստատությունների անունով, դրամական օգնություն կազմակերպել Կովկաս գաղթած արևմտահայերի համար]։ 1915, էջ 116։

Նույն իմաստով նաև՝ Բուլղարիայի հայոց առաջնորդի և այլ հոգևոր ազգային հաստատությունների անունով։ Էջ 116։

**7085. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Կոնդակ՝ Վրաստանի թեմի հայոց առաջնորդին, մոմավաճառության արդյունքից տարեկան 3000 ռ. հատկացնել Թիֆլիսի Գայանյան դպրոցին]։ 1915, էջ 261։

**7086. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Կոնդակ օրհնության՝ Հայոց Ազգագրական Ընկերության անունով նրանց նվիրած «Վասպուրականի հայերեն ձեռագրերի ցուցակը» գրքի համար]։ 1915, էջ 425։

**7087. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Կոնդակ օրհնության՝ Հովհաննես Գևորգի Խաթունցյանցին՝ Նոր Նախիջևանում որբանոցի շենք կառուցելու համար], 1915, էջ 528։

**7088. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Կոնդակ օրհնության՝ Մանուկ Միքայելի Պոպովյանցին՝ Նոր Նախիջևանի Հռիփսիմյան օրիորդաց դպրոցի համար 25.000 ռ. արժողությամբ շենք կառուցելու առթիվ]։ 1915, էջ 527։

**7089. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Կոնդակ օրհնության՝ Նիկողայոս Առաքելյանին՝ Բաքվի ս. Լուսավորիչ եկեղեցու բակում իր ծախքով երկհարկանի շինություն կառուցելու համար]։ 1915, էջ 424—425։

**7090. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Կոնդակ օրհնության՝ Քերովբե Միքայելի Պոպովյանցին Նոր Նախիջևանի եկեղեցական աղքատախնամ հոգաբարձության պատկանող տեղի վրա, 40.000 ռ. արժողությամբ, հայ մանուկների համար մանկապարտեզ կառուցելու համար]։ 1915, էջ 527—528։

**7091. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Մակագրություն Երևանի փոխ-թեմակալ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանին՝ Դպրոցական ֆոնդի գումարի տոկոսներից նպաստ հատկացնել Համզաչիմանի, Բուղդաշենի, Մոլլաբայազիտի, Ավանի, Արամուսի և Առինջի եկեղեցական ծխական դպրոցներին]։ 1915, էջ 433։

Նույնի մասին՝ էջ 433։

**7092. [ԳԵՎՈՐԳ Ե։**—Մակագրություն Էջմիածնի Եղբայրական օգնության գլխավոր կարգադրիչ հանձնաժողովին՝ գաղթականների ներկա և ապագա վիճակի բարելավման առթիվ Էջմիածնում կայանալիք համագումարին ներկայացուցիչներ հրավիրել նաև

Թիֆլիսի հայ հոգևորականությունից և հայ գյուղատնտեսական ընկերությունից]: 1915, էջ 120:

**7093. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Մակագրություն Էջմիածնի Եղբայրական Օգնության Գլխավոր Կարգադրիչ Հանձնաժողովին, դրամական, բժշկական, նյութական օգնություն կազմակերպել Վասպուրականի, Ատրպատականի, Բիթլիսի, Մանազկերտի, Ալեքսանդրապոլի հայ գաղթականների համար]: 1915, էջ 534:

**7094. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Մակագրություն Էջմիածնի Եղբայրական Օգնության Գլխավոր Կարգադիր Հանձնաժողովին՝ «Եղբայրական օգնության» անունով Էջմիածնում պարբերական հրատարակություն ունենալու համար]: 1915, էջ 264:

**7095. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Մակագրություն Էջմիածնի Եղբայրական Օգնության Գլխավոր Կարգադրիչ Հանձնաժողովին, 3000 ռ. փոխադրել Վան, Աղթամարի կաթողիկոսական տեղապահ Սահակ արքեպիսկոպոս Այվատյանի անունով, Վասպուրականի առաջնորդարանի անհրաժեշտ գործերի ու թեմի անհետաձգելի կարիքների համար]: 1915, էջ 535:

**7096. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Մակագրություն Էջմիածնի Եղբայրական Օգնության Գլխավոր Կարգադիր Հանձնաժողովին, ի նկատի ունենալով, որ Վասպուրականի և Մանազկերտի շրջաններում, նաև Հայաստանի մյուս մասերում հայ ժողովրդի թշվառությունն ու կարիքները չափազանց մեծ են, կրճատել Կովկասում ապաստանող գաղթական-փախստականների համար կատարվող ծախսերը, հատկացնելով այն վերոհիշյալ շրջաններին]: 1915, էջ 526:

**7097. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Մակագրություն Հուսիկ արքեպիսկոպոսին մատենադարանում պահելու քեշիշքենդցի Եղիա Ավետիսյանի նվիրած ձեռագիր Մաշտոցը]: 1915, էջ 264:

**7098. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Մակագրություն սինոդի անդամներ Մատթեոս եպիսկոպոսին և Բաբգեն վարդապետ Աղավելյանին՝ Մայր Աթոռի ներքին գանձարանում պահել Մոսկվա տարված թանկարժեք իրերի հանձնողական-ստացողական ստորագրությունները և պահ տված ձեռագրերի ցուցակները]: 1915, էջ 260:

**7099. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Մակագրություն սինոդին, ընդունել Թադեոս Իսահակյանի դպրոցական ֆոնդին կտակած 5000 ռուբլին]: 1915, էջ 104:

**7100. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Մակագրություն սինոդին, ընդունել Պողոս Նուբար Փաշայի հայ կամավորների օգտին ուղարկած 10.000 ռ.]: 1915, էջ 525:

**7101. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Մակագրություն սինոդին, ընդունել Պողոս Նուբար Փաշայի Վանի, Բաղեշի, Բիթլիսի հայ գաղթականների օգտին ուղարկած 15.000 ռ.]: 1915, էջ 525:

**7102. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Մակագրություն 17.353 ռ. 75 կոպ. գումարը «Մշակ»-ի խմբագիր Համբարձում Առաքելյանի միջոցով հանձնել հայկական 6-րդ դրուժինայի հրամանատար Տ. Ղազանճյանին]: 1915, էջ 521:

**7103. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Շրջաբերական գրություններ Երևանի փոխ-թեմակալին Վրաստանի, Շամախու թեմական առաջնորդներին և Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարչին, վիճակագրական տեղեկություններ հաղորդել իրենց թեմերում գտնվող հայ գաղթական քահանաների մասին]: 1915, էջ 831:

**7104. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Շրջաբերական կարգադրություններ ռուսահայ բոլոր թեմակալ առաջնորդներին՝ հայ եկեղեցիներում գտնված ավելորդ եկեղեցական անոթներն ու զգեստները ժողովել և ուղարկել Էջմիածին, որպեսզի ուղարկվի Վասպուրականի թեմի եկեղեցիներին, որոնք ոչնչացվել են քրդերի կողմից]: 1915, էջ 527:

**7105. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Շրջաբերական կոնդակներ ռուսահայ թեմակալ առաջնորդներին, նկատի ունենալով ռուս-տաճկական պատերազմը, երբ անհնար է թեմական առաջնորդներից պսակվողների ամուսնության մասին ճշգրիտ տեղեկություն իմանալ, բավարարվել 6—7 գրագետ անձնավորությունների երդմամբ, եթե նրանք կհաստատեն պսակվողների ամուրիությունը]: 1915, էջ 110:

**7106. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Շրջաբերական կոնդակներ՝ Վրաստանի, Շամախու, Աստրախանի, Բեսարաբիայի թեմերի առաջնորդներին և Ղարաբաղի թեմի ժամանակավոր առաջնորդին. նկատի ունենալով արևմտահայ և պարսկահայ գաղթականների աննկարագրելի տնտեսական վիճակը, հորդորել թեմերում կազմված հանձնաժողովներին և մասնաժողովներին՝ նյութական օգնություն հասցնելու իրենց եղբայրներին և քույրերին]: 1915, էջ 108:

**7107. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Սարիղամիշի Տանատ քահանային՝ վիճակագրական տեղեկություններ հաղորդել Սարիղամիշի հայ գաղթականների մասին: Նաև՝ ի՞նչ հոգ է տարվում փախստականների համար]: 1915, էջ 6:

**7108. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Օրհնության գրություն Առաքել Բաբախանյանին՝ [Լեո] նրա հեղինակած «Հայ հայրենիք» գրքի համար]: 1915, էջ 528:

**7109. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Օրհնության և գոհունակության գրություն Գրիգոր Ք. Չալխուշյանին՝ նրա ուղարկած «Մտքեր, խոհեր և դեմքեր» գրքի համար]: 1915, էջ 263:

**7110. ԳԷՈՐԳ վարդապետ Ուշտունի:** [Էջմիածնի միաբանութան անդամ: Մահախոսական]: 1915, էջ 292:

**7111. ԳՐԷՅ:—Էջմիածին: Նորին սրբութիւն Ծայրագոյն Պատրիարք եւ կաթուղիկոս Ամենայն Հայոց: Անգլիայի Արտաքին գործոց նախարար Գրէյի հեռագիրը:** [Պատասխան կաթողիկոսի ահազանգող հեռագրին: Եղեռնի առթիվ]: 1915, էջ 176:

**7112. ԵԶՆԻԿ ԱԲԵՂԱՅ:—Վիճակագրական տեղեկութիւններ Սեւանայ մենաստանի այցելութիւնների՝ 1914 թ. յուլիս-օգոստոս ամիսներում:** 1915, էջ 475—477:

**7113. ԵՓՐԵՄ եպիսկոպոս Սուքիասեան:** [Էջմիածնի միաբանության անդամ: Մահախոսական]: 1915, էջ 550—552:

**7114. ԷՍԳԷԹ:—Լեզւաբանական դիտողութիւններ:** 1915, էջ 651—654:

**7115. ԷՍԳԷԹ:—Սեմիտական բառեր հայերէնում:** 1915, էջ 782—787:

**7116. ԷՍԳԷԹ:—Սեմիտական բառեր հին հայերէնում: (Բանասիրական):** 1915, էջ 497—500:

**7117. ԹՈՒՄԱՆԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ:—Վերջին օրը:** [Չափածո: Եղեռնի մասին]: 1915, էջ 334—336:

**7118. ԾԱՏՈՒՐԵԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ:—(Մոսկուա): Հայրենիքի ձայնը:** [Չափածո]: 1915, էջ 41—43:

**7119. ԽԱՉԱՏՐԵԱՆՑ ԹԱՄԱՐԱ:—Վեհափառ կաթուղիկոսին ուղղած 70-ամեայ Շուշեցի կնոջ նամակը:** [300 կուժ ջուր կրելով, վաստակած 3 ռուբլին տաճկահայ գաղթականների օգտին նվիրելու մասին]: 1915, էջ 671:

**7120. ԿԻՒՄԻՇԽԱՆԵՑԻ ՄԱՆՈՒԷԼ ՇԱՀԻՆԵԱՆ:—Համառօտութիւն ծննդեան եւ դիպուածոց Մանուէլ Շահինեան Կիւմիւշխանացի պատմաբանիս 1835 ի սուրբ խաչ վանս Ղրիմոյ:** [Հրատարակությունը ծանոթագրություններով Բաբգեն վարդապետ Աղավելյանցի և Տիրայր ծ. վարդապետի]: 1915, էջ 741—774, 866—902, 1916, էջ 96—104, 273—277, 390—392, 592—598, 727—729, 1917, էջ 63—67, 148—153, 507—516, 750—764:

Բովանդ.՝ **Տեղիք ծննդացն իմոց, յորոց եւ ես:—Պատահարք այս ծնողացս:—Եւ դիպուածք Պէկզատ Մօր իմոյ:—Յաջողակ ծննդեան. Անյաջող կեանք:—Ո՞ւր եւ յորո՞ց դաստիարակեցայ:—Թէ ո՞ւստի եւ ո՞վ իցէ այս Առաջնորդ:—Գալն Չերքէզեան Սեբաստացի Յօհաննէս Արքեպիսկոպոսին ի Կիւմիշխանայ եւ ա-**

շակերտիլն իմ նմա:—Նախաձանօթութիւն Դանիէլ
Արքեպիսկոպոսի եւ Ներսէս վարդապետի:—Վախ-
ճան Համատանցւոյն և գնալն մեր Անդ:—Զկնի թաղ-
ման սորա, եւ իմ ի Կոստանդնուպօլիս գնալոյս:—Ի
պատրիարգութեան Դանիէլ Արքեպիսկոպոսի:—
վախճան Ղուկաս կաթուղիկոսի եւ ընտրութիւն փո-
խանորդի:—Գալուստ Մօրն իմոյ ի Պօլիս:—Գնալն
Դանիէլ Պատրիարգին ի Պոհճայատայ:—Վերադառ-
նալն մեր յաքսորանաց:—Ճանապարհորդութիւն Դա-
նիէլ Սրբազանին ի Պայազիտ:—Գնալն իմ ի Պօլիս,
եւ գալ Ներսէս վարդապետին անդ եւ դարձուածք:—
Ներգործութիւնք ի Ռուսաստանու:—Կառավարու-
թիւնք Գրիգոր Պատրիարգին:—Բանք Սէհէթճի Բար-
դուղիմէոսին առ իս:—Զիարդ առաքեցայ ի Պետըր-
բուրգ:—Արդիւնք գնալոյն իմոյ ի Պետերբուրգ:—
Հաշուապահանջութիւնք մեր ի Գրիգոր եպիսկոպո-
սէ:—Գնալն իմ ի Գրիգորիպօլ:—Յետ երկուց ամուրց
պատասխանիք Կուսյէնճաթին առ իս:—Պատճառք
ի Գրիգոր վարդապետէ հաշուապահանջութեանց:—
Փոխարկութիւնք Գրիգորիպօլցւոյն:—Քօլեան Սրբա-
համ եպիսկոպոսի գալն ի Գրիգորիօպօլ եւ վերա-
դառնալն:—Պատճառ կառուցանելոյ ի Գրիգորիպօլ
վարժարան ի մեր լեզու:—Գալն վիճակաւոր Եփրեմ
Արքեպիսկոպոսի ի Գրիգորիպօլ յԱյցելութիւն մեզ:—
Գնալն իմ Եաշ քաղաք եւ ի Աշովայ:—Երկրորդ ան-
գամ գնալն իմ ի Ս. Պետերբուրգ: 1915, էջ 741—774:
—Դիպուածք կենդանի նահատակ Պօլսեցի Յօհաննէս
Արք-եպիսկոպոսի:—Շինումն Գրիգորիպօլու Առաջ-
նորդարանին:—Դրութիւնք Ղրիմու Նահանգի Մե-
րազանց եւ Սուրբ Խաչ վանքի:—Գնալն իմ ի Ղրիմ:—
Վասն հոգեւոր կառավարութեան եւ վարժարանին:—
Գործառնութիւնք մեր վասն Վանքի հողոյն:—Երրորդ
անգամ գնալն իմ ի Պետրբուրգ:—Վերադառնալն մեր
ի Պետրբուրգու ի Ղրիմ: 1915, էջ 866—902: Պատ-
ճառք երանելոյն իմոյ ի Ղրիմու, եւ գնալոյս ի Տըփ-
խիս:—Վասն էր Եփրեմ սրբազան Հայրապետն թո-
ղեալ զԱթոռն թափառական շրջի ի Հաղբատ եւ ի
Տփխիս:—Ուստի եւ որքան էին պարտք Աթոռոյն
Յեփրեմ Հայրապետէ գոյացեալք:—Վասն ի Հաղբատ
գնալոյ Եփրեմ Հայրապետին:—Թէ ո՞րպէս վճարեցաւ
Առաջին բաժին պարտուցն:—Պատճառ գալստեան
Եփրեմ Հայրապետի ի Հաղպատու ի Տփխիս:—Առու-
մըն Ապպասապատու մերձ Հին Նախիջեւանու:—Ա-
ռումն Սարդարապատին եւ գնալս մեր յէջմիածին:—
Ամրափակելն միաբանից ի բերդն Երեւանու:—Առումն
Երեւանու:—Առումն Երեւանու եւ մեր մտանելն յԱ-
թոռ:—Շնորհաբաշխութիւնք կայսեր եւ Սահմանա-
դըրութիւն Պարսից:—Սպանումն դեսպանին Ռու-
սաց:—Վերադառնալն իմ յէջմիածին եւ որպիսու-
թիւնք նորին:—Կարգաւորութիւնք Էջմիածնի գըրա-
տանն:—Հոգացողութիւնք գաղթականաց Սերովբէ
վարդապետի ծագումն եւ գործողութիւնք նորա:—
Գնալն Ներսէս արքեպիսկոպոսի ի Պէզարապիոյ եւ
վերադառնալն Եփրեմ Հայրապետի Աթոռն:—Առա-
ջին շրջագայութիւնք իմ ի Վանոյայս եւ ի Սեւան
կղզի:—Ծանօթութիւն Սուրբ Գեղարդի վանուցն:—
Մողնւոյ վանքն եւ շրջագայք նորին:—Աղբիւր Սրբոյն
Յակոբայ: 1915, էջ 876—902:—Խոր Վիրապ վա-
նուց որպիսութիւնք:—Բանք դեսպանի Նատր-Շա-
հին:—Զառաջին հոգացողութիւն մեր վասն Խոր Վի-
րապայ:—Անհամաձայնութիւն զահերիցանց առ ժո-
ղովական կառավարութիւն Էջմիածնի: 1916, էջ 94—
104:—Առաջին հրաժարումն իմ յանդամակցութենէ:—
Անկանոն հաշուառութիւնք Սինոթական կառավարու-
թեան:—Պատճառք այսպիսի եղ եւ մտից:—Առաջին
գնալն Կարբեցի Յօհաննէս արքեպիսկոպոսին ի Թիֆ-
լիզ առ Պասկեւիչն: 1916, էջ 273—277:—Վախճանա-
կան խնդիրն իմ հրաժարման:—Գրութիւն աւազ յու-
սարարին յետ գնալոյն մեր ի Խոր Վիրապ:—Արգա-
սիք Սերովբէ վարդապետի:—1916, էջ 390—393:—
Երկրորդ գնալն իմ ի Սեւան կղզի:—Հրաժարումն
Եփրեմ Հայրապետի:—Պատճառ եկանելոյն իմոյ ի Սե-
ւանու:—Իմ պատասխանիք առ այս հրաւէր:—Երկ-
րորդ ընտրութիւն նոր կաթուղիկոսի:—1916, էջ 592—
598:—Առաջնորդական կառավարութիւնք ի Տըփ-
խիս:—Պատճառ գնալոյն իմոյ ի Տփխիս: 1916, էջ
727—729:—Վկայութիւն Յօհաննէս կաթուղիկոսի ծա-
ռայութեանց իմոց: Նաև ռուսերէն բնագիրը: 1917,
էջ 63—67:—Զուստն եւ զիարդն Մսուր դպրի:—
Վասն Ալամդարովի աքսորանացն Կայսերական շը-
նորհ հայրապետաց եւ օծութիւն:—Նախընթաց նշանք
օծութեան հայրապետիս:—Օրինակ շնորհաւորութեան
գրոյս:—1917, էջ 148—155:—Թէ որպիսի ինչ էր
Սուրբ Սարգիս ուխտատեղին:—Օրհնութիւն Միռո-
նի:—Վասն Յովակիմ Պատրիյին:—Պատճառք հրա-
ժարելոյ մեր ի կառավարութենէ Սուրբ Սարգիս ուխ-
տատեղւոյն:—Վախճան Եփրեմ կաթողիկոսի:—Պատ-
ճառ կամեցողութեան իմոյ վերադառնալ ի Ղրիմ:—
Ապարդիւն պատճառք Յօհանն[էս] Հայրապետի կա-
լըստեան ի Թիֆլիզ:—1917, էջ 507—517:—Գալըստ-
եամբ վեհին շահեցաք զազատութիւն մեր:—Առիթ
Դեղթափ տետրակին եւ այլոց:—Յելանելն իմ ի Թիֆ-
լիզու:—Շինութիւն Սուրբ Խաչի վանուց:—Ծանօթու-
թիւն շարժին Արարատու եւ կործանման Մեծ Մասիս
լերին:—«Պատմութիւն անցից գետնաշարժին ի Հա-
յաստան աշխարհ ի 1840 ամի:—Վերադարձ Դեղթափ
Թիւրակէսի: 1917, էջ 750—764:

**7121. ԿՈԾԵՆ Դ.Ը.**:—Հայաստան: [Թուրքիայի, Աբդուլ Համիդի քաղաքականության և հայկական հարցի մասին: Հոդվածը տպագրված է Փարիզի «Le Caulois» օրաթերթում. արտատպված «Հորիզոնից»]: 1915, էջ 30—33:

Հեղինակի անունը՝ բնագրից:

**7122. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ** ձայնը: 1915, էջ 460—463:

Բովանդ.՝ **Տէր-Աւետիսեան Յովհաննէս քահանա Առաջնորդ-փոխանորդ Մանազկերտի: (Մանազկերտի բերդ):—Վեհափառ Տէր:** [Նամակ կաթողիկոսին Մանազկերտի և շրջակայքի հայերի տանջալից դրության և կոտորածների մասին]:—**Մեղեյան Նազարէթ առ-ժամեայ քարտուղար: (Մանազկերտի բերդ):—Խնուսի հայաբնակ գիւղերու տուներու ցանկը:** [Վիճակագրական տվյալներ բնակչության նախկին և կոտորածներից հետո եղած թվերի՝ ըստ գյուղերի]:

**7123. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ձայնը:** [Տեղեկություններ Լիմ անապատից]: 1915, էջ 177—178:

**7124. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ձայնը: (Քաղուածներ կարեւոր նամակներից)**: 1915, էջ 562—566:

**7125. ՀԱԽՈՒՄԵԱՆ ԱԾՈՏ:—Ուրուագծեր Ղարաբաղի անցեալից**: 1915, էջ 220—222:

**7126. ՀԱՄԱԶԱՍՊ վարդապետ Համազասպեան:** [Մայր Աթոռի միաբան: Մահախոսական]: 1915, էջ 730—731:

**7127. ՀԱՅԵՐԻ կոտորածը Տանկաստանում:** [Դիմումներ կաթողիկոսին, խնդրելով շուտափույթ օգնություն՝ զսպելու տաճիկ կառավարության գազանային հակումները հայերի նկատմամբ]: 1915, էջ 170:

**7128. ՀԱՅԿԱԿԱՆ հարց: Երեք պետութեանց** [Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի] **պատմական հեռագիրը հայկական կոտորածների առթիւ: (Պետ. հեռագրական գործակալութիւն): (Պաշտօնական)**: 1915, էջ 302—304:

**7129. ՀԱՅԿԱԿԱՆ հարց: Կոտորածների ձայնը:** [Մանազկերտի և շրջակայքի]: 1915, էջ 304—306:

Ստորագր.՝ **Առաջնորդ փոխանորդ Մանազկերտի Յովհաննէս քահ. Տէր-Աւետիսեանց:**

**7130. ՀԱՇԻՒ ս. Էջմիածնի սինոդում գաղթականների անունով ստացուած գումարների:** [Սկսված 1914 թվի դեկտեմբերի 20-ից մինչև 1917 թվի օգոստոսի 31-ը: Ազգային-եկեղեցական մարմիններից, թեմերից, անհատներից, օտար եկեղեցական կազմակերպություններից, պետական ֆոնդերից, սփյուռքի բովանդակ հայ կենտրոններից]: 1915, էջ 505—512,

664—667, 793—799, 925—928, 1916, էջ 157—160, 292—294, 442—443, 607—608, 766—767, 945—946, 1917, էջ 78—79, 254—255, 397—398, 848—849:

7131. **ՂԵՒՈՆԴ եպիսկոպոս Յովակիմեան:** [Մայր Աթոռի միաբան: Մահախոսական]: 1915, էջ 728—729:

7132. **ՂԼՏՃԵԱՆ ԱՐՍԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ:—1. Армянский сборник. Москва.—2. Трагедия Турецкой Армении. Юрий Веселовский. Москва.** [Գրախոսություն]: 1915, էջ 655—660:

Ստորագր.՝ Ա. վ. Ղ.:

7133. **ՄԱՅՐ Աթոռ:** 1915, էջ 17—19, 132—133, 287—292, 434—440, 547—552, 727—731, 841—849:

7134. **ՄԱՅՐ Աթոռ:** [Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի հիվանդության մասին]: 1915, էջ 845:

7135. **ՄԱՅՐ Աթոռ:** [Բծավոր տիֆի համաճարակ Էջմիածնում: Առանձին հիվանդանոցներ մեծահասակների և մանուկների համար, նաև առանձին բժշկական կայան երթևեկ հիվանդների համար, բժիշկ Տեր-Մկրտչյանի հսկողությամբ]: 1915, էջ 847:

7136. **ՄԱՅՐ Աթոռ:** [Գաղթական հայերի վիճակը բարելավելու և նրանց երկիր տեղափոխելու հարցերի առթիվ համագումար ս. Էջմիածնում՝ 1915 թ. մարտի 1—3]: 1915, էջ 133:

7137. **ՄԱՅՐ Աթոռ: Գէորգեան ճեմարանի 1914—15 թ. շրջանաւարտները:** 1915, էջ 444—445:

7138. **ՄԱՅՐ Աթոռ:** [Գոհաբանական պատարագ և համաժողովրդական ուրախություն Էջմիածնում, ռուսական զորքի կողմից Սարիղամիշում տարած հաղթանակի առթիվ]: 1915, էջ 18:

Ստորագր.՝ Բ. վ. Ա.—Բաբկեն վարդապետ Աղավելյան:

7139. **ՄԱՅՐ Աթոռ:**—[Էջմիածնում նոր վեհարանի շենքը հիվանդանոց դարձնելու, նոր հիվանդանոցի վերին հարկը զինվորական հիվանդանոցի վերածելու, առաջին և երկրորդ հարկերը գաղթականներին հատկացնելու, ճեմարանի և ս. Գայանեի վանքի նորակառույց շենքերը վերստին հիվանդանոց թողնելու մասին]: 1915, էջ 846—847:

7140. **ՄԱՅՐ Աթոռ:** [Կաթողիկոսի կարգադրությամբ հատուկ պատվիրակության ժամանում Թիֆլիս՝ Կովկասի նոր փոխարքա Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի մուտքը դիմավորելու համար: Պատվիրակության անդամներն էին Հուսիկ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը և Բաբկեն վարդապետ Աղավելյանը: Պաշտոնական տեսակցություն]: 1915, էջ 727—728:

7141. **ՄԱՅՐ Աթոռ:** [1915 թվի ապրիլի 25-ին Մոսկվայի Հայոց հանձնաժողովի և Պիրոգովյան ընկերության սանիտարական խումբը, բաղկացած բժշկուհիներից և գթության քույրերից, Աշտարակում և շրջակա գյուղերում՝ բժշկական օգնություն ցույց տալու և տաք կերակուր մատակարարելու նպատակով]: 1915, էջ 133:

7142. **ՄԱՅՐ Աթոռ: Հայ կամաւորները ս. Էջմիածնում:** [Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ. Արևմտահայաստանին օգնելու նպատակով]: 1915, էջ 287—290:

7143. **ՄԱՅՐ Աթոռ: Մաղթանք Վանի գրաւման առթիւ:** [Գրավումը ռուսական զորքի կողմից, հայ կամավորների օգնությամբ 1915 թվի մայիսի 9-ին]: 1915, էջ 291:

7144. **ՄԱՅՐ Աթոռ:** [Նախարարների խորհրդի գործերի կառավարչի օգնական արքայական սենեկապետ Նիկիտինի և «Պատերազմից վնասվածների օգնության Կովկասյան Գլխավոր Հանձնաժողովի» գործերի կառավարիչ Ա. Պավլովի ժամանումը Էջմիածին, նրանց կացությանը և կարիքներին ծանոթանալու նպատակով]: 1915, էջ 841:

7145. **ՄԱՅՐ Աթոռ: Որբերի խնամածութիւնը:** [Արևմտահայ որբերը. ս. Էջմիածնում]: 1915, էջ 847—849:

7146. **ՄԱՅՐ Աթոռ:** [Պատերազմի պատճառով 1915 թ. փետրվարի 3-ին Մայր Աթոռի թանգարանի և զգեստատան բոլոր կարևոր իրերը և մատենադարանի ձեռագրերը արկղերի մեջ ամրացված տեղափոխվում է Մոսկվա, պահվում Հայոց վերացման ս. Խաչ եկեղեցու խորաններում: Տեղ է հասցվում փետրվարի 11-ին: Տեղափոխության պատասխանատուները են սինոդի անդամներ՝ Մատթեոս եպիսկոպոսը և Բաբգեն վարդապետը]: 1915, էջ 132:

7147. **ՄԱՅՐ Աթոռ:** [Պետական Դումայի անդամ Միքայել Պապաջանյանի ժամանումը Էջմիածին՝ ծանոթանալու ներքին գործերին և մեկնումը Աշտարակ, Երևան, Ջուղա, Պարսկաստան]: 1915, էջ 842:

7148. **ՄԱՅՐ Աթոռ:** [Վիճակագրական տվյալներ ռուս-տաճկական պատերազմի պատճառով Տաճկաստանից և Ռուսաստանից գաղթած հայերի մասին: Տաճկահայերը գաղթել են Ալաշկերտի, Ղարաքիլիսայի, Դիադինի, Բայազետի կողմերից, մոտ 30 հազար մարդ տեղավորվել են Էջմիածնի, Սուրմալուի, Երևանի և Ալեքսանդրապոլի գավառների հայաբնակ գյուղերում: Պարսկահայերը գաղթել են՝ Սալմաստից, Ուրմիայից, Խոյից և Թավրիզից, մոտ 25 հազար մարդ, տեղավորվել Հին Նախիջևանի և Շարուր Դարալագյազի կողմերում: Բոլոր գաղթականներին խնամելու համար կան տեղական «Եղբայրական օգնության հանձնաժողովներ»: Գաղթը տեղի է ունեցել 1914 թվի դեկտեմբերի 20-ից սկսած]: 1915, էջ 19:

Ստորագր.՝ Բ. վ. ա.—Բաբգեն վարդապետ Աղավելյան:

7149. **ՄԱՅՐ Աթոռ:** [Տեղեկություններ Արևմտահայաստանում տիրող հայ ժողովրդի ողբերգական վիճակի մասին: Ամբողջ քաղաքներ, գավառներ և հայաբնակ վայրեր դատարկվում են հայության վերջին մնացորդներից, աքսորվում Միջագետքի և Սիրիայի անջրդի վայրերը: Երիտասարդների բռնի հալածում: Մանկամարդ կանանց և աղջիկների առևանգում: Քրդերի դարանակալ հարձակումներ նահանգներին: Այդ առթիվ օգնության հայցում ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնից]: 1915, էջ 842—844:

Նույն տեղում՝ **Գէորգ Ե կաթողիկոս Ամենայն Հայոց: «Վաշինգտոն Միացեալ Նահանգների Նախագահ Վիլսոնին»:** [Հեռագիր: Տաճկահայ աքսորյալ գաղթականներին օգնելու համար]: էջ 843—844:

**ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—** [Հեռագիր Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ տ. Արսեն ծ. վ. Վեհունուն: Տաճկահայ աքսորյալների օգնության գործը Ամերիկայում կազմակերպելու համար]: 1915, էջ 844—845:

7150. **ՄԱՐԳԱՐԵԱՆՑ ՏԻԳՐԱՆ:—Մանկագիտութեան այժմեան դրութիւնը:** 1915, էջ 478—484:

7151. **ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՆԱԶԱՐԷԹ:—Էջ մը Հայաստանի հնութիւններէն:** [Ալաշկերտի ս. Հովհաննու վանքի մասին]: 1915, էջ 569—572:

7152. **ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՆԱԶԱՐԷԹ:—Յուշքերն ու յուշերը Եփրատի ափերին: («Անթապի բանակատեղ գնդակահարվող եւ Եփրատ ձգուող 250 հայ զոհերու յիշատակին»)**: 1915, էջ 567—569:

7153. **ՄԱՔՍՈՒԴԵԱՆՑ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ:— Անունը հայերէնի մէջ:** 1915, էջ 406—409:

7154. **ՄԱՔՍՈՒԴԵԱՆՑ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ:— Գարեգին վարդապետ Յովսէփեան: Քարտէզ հայ հնագիտութեան, արտատպութիւն «Շողակաթ» գիտական ժողովածուից: Վաղարշապատ, 1915:** [Գրախոսական]: 1915, էջ 94—96:

7155. **ՄԱՔՍՈՒԴԵԱՆ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ:— «Եղանիմ» բայի կրած կերպարանափոխութիւնները:** 1915, էջ 247—253:

7156. **ՄԱՔՍՈՒԴԵԱՆՑ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ:—**

Վասպուրականի հայերէն ձեռագրաց ցուցակի Ա պրակը: [Գրախոսական]: 1915, էջ 916—919:

**7157. ՄԵԼԻՔՍԷԹ-ԲԷԿՈՎ Լ.:—Էրզրումի վիլայէթի Իշխան աւանը: (Պատմական տեղեկութիւններ): Թարգմ. Յուսիկ արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան: (Л. Меликсет-Беков, Тиф. Лист. 1915, № 107).** 1915, էջ 358—360:

**7158. ՄԵՐ ազգային կեդրոնը:** [Ամերիկահայ «Կոչնակ» շաբաթաթերթը ս. Էջմիածնի՝ որպես ամբողջ հայության հոգևոր կենտրոնի մասին]: 1915, էջ 738—740:

**7159. ՄՕՍՈՒԼԻ Աթաբէկ Լուլուի յիշատակին կանգնած մահարձանները ու նոցա արձանագրութիւնները: Max van Berchnem. (Monuments et inscriptions de l'Atabek Lúlú de Mossoul): Թարգմ. ֆրանս.՝ Տիրայր վարդապետ:** 1915, էջ 616—633:

**7160. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ Ա.:—Յակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսը եւ տաճկանայ նուիրակութեան խնդիրը:** [Բնագրեր: Ուսումնասիրություն]: 1915, էջ 195—205:

Բնագրեր՝ [1662 թ. Լեհաստանի հայերին ուղղած Հակոբ Ջուղայեցու մի կոնդակը]: Էջ 195—196:

Սկ. **«Եւ մանաւանդ քան զնուիրակութիւն կըրկնակի օգնութիւն իմն կու խնդրեմ ի ձէնջ...**

**Յակոբ Դ. Ջուղայեցու մի շրջաբերականի մնացորդները:** Էջ 201—205:

Սկ. **«...գայ առ ինքն աղաղակ, յայնժամ հրամայեաց...**

**7161. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ Ա.:—Յակոբ Ջուղայեցու մի գրութիւնը ռուս արքունիքին:** 1915, էջ 775—781:

1678 թ. Էջմիածնում պարսկահայերի ազատագրման գործը կազմակերպող գաղտնի խորհրդակցության, Իսրայել Օրիի քաղաքականության, հայ-վրացական ապստամբության և այդ ապստամբությունը ղեկավարող կաթոլիկ Եվրոպայի աջակցության մասին: Բերված է մոսկովյան ցարին ուղղած հետնադարյան լատիներենով գրված գրության բնագիրը, ցարի անունը, ինչպես նաև գրության տեղն ու թիվը նշված չէ: Գրությունը վավերացված է կարմրադեղ կնիքով, որի մակագրությունն է Հակոբ կաթողիկոս Ամենայն Հայոց, թիվ ՌՃԴ—1655, որը ցույց է տալիս խնդրատուի կաթողիկոսության առաջին տարին և կապ չունի գրության ժամանակի հետ:

**7162. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ Ա.:—Նիւթեր հայ մելիքութեան մասին. Բ պրակ. Դօփեանք եւ Մելիք Շահնազարեանք. գրեց Կարապետ եպիսկոպոս: Ս. Էջմիածին, 1914. հրատ. ազգ. ընկ.** [Գրախոսական]: 1915, էջ 788—792:

**7163. ՅՈՎՍԷՓԵԱՆ ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ:—Հայագիտական այլ եւ այլք: Գրիգոր Շղթայակրի մի նամակը Յովհաննէս Կոլոտին:** [18-րդ դարի առաջին քառորդի հայ նշանավոր դեմքեր՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք Հովհաննես Կոլոտի և Երուսաղեմի հայոց պատրիարք Գրիգոր Շղթայակրի մասին: Ուսումնասիրություն: Բնագիր]: 1915, էջ 211—218:

Բնագիր՝ **Տեառն Յովհաննու Աստուածաբան վարդապետին եւ մեծի պատրիարգին սրտաբեկ անձամբ եւ լալոտ աչօք զողջոյնն սիրոյ, ընծայեմ:** [Նամակ]: Էջ 212—219:

Սկ. **Եւ զայս ինչ յայտ առնեմ...**

**7164. ՅՈՎՍԷՓԵԱՆ ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ:—Տ. Կարապետ եպիսկոպոս [Տէր-Մկրտչեան]: (Առաջնորդ Շամախու թեմի)** [Էջմիածնի միաբանության անդամ: Մահախոսական]: 1915, էջ 849—856:

**7165. ՅՈՎՍԷՓԵԱՆ ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ:—Տրդատի յունարէն արձանագրութիւնը:** 1915, էջ 218—219:

Հայտնաբերվել է Բաշ Ապարանի կամ Քասախի եկեղեցում՝ Գարեգին վարդապետի և Մառի աշակերտ Տիխոնովի կողմից: Արձանագրությունը Տրդատ անունով մի հայ թագավորի է, կամ Տրդատ Մեծի կամ Տրդատ վերջինի՝ քրիստոնյա:

**7166. ՆԱՄԱԿՆԵՐ խմբագրութեան «Արարատ» ամսագրի:** [Նվիրատվություններ Էջմիածնի Մայր Աթոռին]: 1915, էջ 668—670:

**7167. ՆԱՐՆՋԱԳՈՅՆ գիրք: Տաճկա-Հայաստանի բարենորոգութիւնների մասին. (Сборник дипломатических документов. Реформы в Армении 26 ноября 1912 г.—10 мая 1914 года).** [Փաստաթղթեր № 1—50: Հրատարակությունը, ծանոթագրություններով Բաբգեն վարդապետ Աղավելյանցի]: 1915, էջ 317—333, 464—474, 601—606:

Բովանդ.՝ **Կ. Պօլսի ռուսաց դեսպան Գիրսի ընդարձակ հեռագրերը Արտաքին Գործոց նախարար Սազանովին: Կ. Պօլիս, 26 նոյեմ. 1912 թ.:—Արտաքին գործոց նախարար Սազանովի նամակը Կ. Պօլսի ռուսաց դեսպան Գիրսին: 30 նոյեմ. 1912 թ.:—Դեսպան Գիրսի հեռագիրը Սազանովին: 11/24 դեկտ. 1912 թ.:—Սազանովը Անգլիայի և Ֆրանսիայի ռուսաց դեսպաններին: Պետրոգրադ 13 դեկտ. 1912 թ.:—Գիրսի հեռագիրը Սազանովին: 15/28 դեկտ. 1912 թ.:—Կ. Պօլսի դեսպան Գիրսի հեռագիրը Արտաքին գործոց նախարար Սազանովին: 14 դեկտ. 1912 թ.:—Տաճկաստանի դեսպանը Արտաքին գործոց նախարարին: Կ. Պօլիս. 17 դեկտ. 1912 թ.:—Բայազիտի փոխ հիւպատոսը Արտաքին գործոց նախարարին: Բայազիտ 20 դեկտ. 1912 թ.:—Ֆրանսիայի ռուսական դեսպանը Արտաքին գործոց նախարարին: Փարիզ 24 դեկտ. 1913 թ.:—Տաճկաստանի ռուսական դեսպանը արտաքին գործոց նախարարին: Կ. Պօլիս, 27 դեկտ. 1912 թ.:—Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի փոխարքան Արտաքին գործոց նախարարին: Թիֆլիս, 7 փետր. 1913 թ.:—Տաճկաստանի ռուսական դեսպանը Արտաքին գործոց նախարարին: Կ. Պօլիս, 28 փետր.—13 մարտի 1913 թ.:—Ֆրանսիայի ռուսական դեսպանը (Իզվոլսկի) գրում է Արտաքին գործոց նախարարին Փարիզ 28 փետր.—13 մարտ 1913 թ.:—Տաճկաստանի ռուսաց դեսպանը (Գիրս) հեռագրում է Արտաքին գործոց նախարարին: Կ. Պօլիս 11 մարտի 1913 թ.:—Գերմանիայի ռուսաց դեսպանը (Սվերբէեւ) Արտաքին գործոց նախարարին: Բեռլին 15/28 մարտի 1913 թ.:—Բիթլիսի ռուսական հիւպատոսը Կ. Պօլսի ռուսական դեսպանին: Բիթլիս 31 մարտի 1913 թ.: Հեռագիր:—Էրզրումի ռուսաց հիւպատոսը (Ադամով) Կ. Պօլսի ռուսաց դեսպանին: Էրզրում 6/19 ապրիլի 1913 թ. հեռագիր:—Տաճկաստանի ռուսական դեսպանը Արտաքին գործոց նախարարին: Կ. Պօլիս, 7 ապրիլի 1913 թ.: Հեռագիր:—(Նոյնը)՝ 23 ապրիլի 1913 թ.: Հեռագիր:—Բիթլիսի ռուսական հիւպատոսը Կ .Պօլսի ռուսաց դեսպանին: Բիթլիս 1 մայիսի 1913 թ.: Հեռագիր:—Տաճկաստանի ռուսական դեսպանը Արտաքին գործոց նախարարին: Կ. Պօլիս, 6 մայիսի 1913 թ.:—Հեռագրեր, նամակներ, փաստաթղթեր № 23-ից № 50:** [Առանց խորագրերի]:

**7168. ՆՈՐԻՆ Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե-րդ Սրբազնագոյն կաթուղիկոսի բարձր հովանաւորութեան եւ անմիջական հսկողութեան ներքոյ գտնուող ս. Էջմիածնի եղբայրական օգնութեան գլխաւոր կարգադիր յանձնաժողովից կոչ համայն հայութեան:** [Տաճկահայ գաղթականներին օգնելու համար]: 1915, էջ 518—520:

**7169. ՆՈՒՊԱՐ ՊՕՂՈՍ:—Շրջաբերական:** [Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունից դուրս՝ Ազգային Շահերի Պաշտպանության գործին նպաստող նոր հատուկ հանգանակիչ հանձնաժողով կազմելու մասին]: 1915, էջ 255—256, 413—414:

**7170. ՈՒԷԼՏԸՆ: Եպիսկոպոս:—Աղօթք Մանչէստրի եկեղեցում: Ուէլտըն եպիսկոպոսի քարոզը:** [Հայկական կոտորածների առթիվ]: 1915, էջ 857—859:

Տպագրությունը «Հորիզոն»-ում Արշակ Սաֆրաստյանի:

**7171. ՊԱԲՍՏ:—Գործնական դաստիարակութիւն: (Ըստ Պաբստի): Թարգմ. Տէր-Յակոբեան Ց.:** 1915, էջ 49—60, 188—194, 346—357, 645—650, 902—915, 1916, էջ 424—436:

Բովանդ.՝ **Նախադպրոցական դաստիարակութիւնը եւ դպրոցական առաջին տարիները:—Գործնական դաստիարակութիւն:—Սկզբնական ուսուցումն:—Գործնական ուսուցման անհրաժեշտութեան հոգեբանական եւ մանկավարժական հիմնաւորումը:**

**7172. ՊԱՊԱԺԵԱՆ ԱՐՇԱԿ:—Ինչ պէ՞ս գաղթեցինք:** [Ընվեր-փաշայական կառավարության հայաջինջ քաղաքականության մասին]: 1915, էջ 150—169, 573—585:

Բովանդ.՝ **Այստեղ կը բերենք Բագրեւանդի գաւառակներն և գիւղօրէքը իրենց հայ բնակչօք, որոնք գաղթել են: Ա. Պայազիտ:—Բ. Տիատին:—Գ. Գարաքիլիսէ:—Դ. Թոբրագ-գալէ (Ալաշկերտ):—Ե. Տութաղ:** [Ընդամենը 34548 մարդ]:—**Մեր գաղթած վայրերում բնակչութիւնը եւ լեզուն, տնտեսական, կրթական, կրօնական եւ յարաբերական կացութիւնը նախքան պատերազմը:**

**7173. ՋԻՎԻԼԵԿԵԱՆ Ա.:—Հայկական հարց:—Կիլիկիայի հարցը: (Պէ՞տք է արդեօք Կիլիկիան ինքնօրէն Հայաստանի մի մասը կազմի, թէ՞ հարկաւոր է նրան մի կողմ թողնել՝ հարցը աւելի չբարդացնելու համար, իսկ ինքնօրէն Հայաստանի շրջանը սահմանափակել հիւսիսային վիլայէթներով 1914 թուի յունուարի 26-ի արձանագրութեան տառացի իմաստով):** [Հարցի և Ն. Միլյուկովի «Речь»-ում տպագրված **«Թիւրքաց Հայաստանի բաղդը»** հոդվածի շուրջը: Հոդվածի վերջում՝ **«Մանրաթագրութիւն խմբագրութեան»** խորագրով վիճակագրական տվյալներ Կիլիկիայի հայ ազգաբնակչության վերաբերյալ: 1915, էջ 25—29:

**7174. [ՌՈՄԱՆՈՎ ՆԻԿՈԼԱՅ:—Բարձրագոյն հրովարտակներ: (Պետական հեռագրական գործակալութիւն): Բարձրագոյն հրովարտակ յանուն գերագոյն զօրահրամանատար Ն. Կ. Բ. մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաեւիչի:** [Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նրան Կովկասի փոխարքա և կովկասյան բանակի գլխավոր հրամանատար նշանակելու մասին]: 1915, էջ 675—676:

Նույն տեղում՝ **Բարձրագոյն հրովարտակ: Յանուն գեներալ Վորոնցով-Դաշկովի:** [Կովկասի փոխարքայության պարտականություններից ազատելու մասին]: 1915, էջ 677—678:

**7175. ՍԱԶԱՆՈՎ:—Էջմիածին: Նորին սրբութիւն կաթողիկոսին Ամենայն Հայոց:** [Պատասխան հեռագիր: Եղեռնի առթիվ]: 1915, էջ 175:

**7176. ՍԱՐԳԻՍ եպիսկոպոս Փիլոյեան:** [Սևանա վանքի վանահայր: Մահախոսական]: 1915, էջ 729—730:

**7177. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ ԱՐՍԷՆ ՔԱՀԱՆԱՅ:—Վարդանանց յիշատակին:** [Քարոզ խոսված Մոսկվայի ս. Խաչ եկեղեցում]: 1915, էջ 128—131:

**7178. [ՍԻՆՈԴԻ** որոշումը՝ Եկատերինոսլավի նահանգի Ալեքսանդրովսկ գյուղում հայոց աղոթատուն շինելու մասին]: 1915, էջ 436:

**7179. [ՍԻՆՈԴԻ** որոշումը՝ ընդունել թիֆլիսեցի Ավետիք Մանվելյանի նվիրած հողաբաժինը ս. Կարապետ եկեղեցու օգտին և կարգադրել Վրաստանի Հայոց կոնսիստորիային, այդ հողամասի վրա Թիֆլիսում կառուցել եկեղեցական-ծխական դպրոց]: 1915, էջ 722:

**7180. [ՍԻՆՈԴԻ** որոշումը՝ Կարապետ Տեր-Խաչատրյանին Մայր Աթոռի և ճեմարանի բժիշկ նշանակելու մասին]: 1915, էջ 125—126:

**7181. [ՍԻՆՈԴԻ** որոշումը՝ Նովոնիկոլաևսկ գյուղում հայոց աղոթատուն շինելու մասին]: 1915, էջ 718:

**7182. [ՍԻՆՈԴԻ** որոշումը՝ Պատվիրել Մայր Աթոռի գանձապահին Պողոս փաշա Նուբարի 30.000 ռուբլուց 26.650 ռ. փոխադրել Թիֆլիսի Ազգային բյուրոյին, իսկ մնացած 3350 ռ. «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելյանի միջոցով Զ կամավորների խմբի ղեկավարին]: 1915, էջ 717:

**7183. [ՍԻՆՈԴԻ** որոշումը՝ Տիրայր ... Մայր Աթոռի դիվանապետ նշանակելու մասին]: 1915, էջ 722:

**7184. [ՍԻՆՈԴԻ** որոշումը՝ Տիրանի Կարապետյանի ... աշխարհ կալվածքը 37700 ռ. արժողությամբ Եկատերինոդարի հայոց եկեղեցուն նվիրելու մասին]: 1915, էջ 126:

**7185. ՍԻՆՈԴԻ օրագրերից քաղուածներ:** 1915, էջ 10—12, 124—127, 280—282, 434—440, 542—543, 717—723, 837—840:

**7186. ՍԻՕՆ ՎԱՐԴԱՊԵՏ:—Զբնաղագեղն Մանդու: («Հրամայեաց (Արտաշէս) զապարանսն Արգամայ այրել և զհարճ նորին, որ կարի չքնաղ էր գեղով և մնացեալ գնացիք ոտից, զոր կոչէին Մանդու, ածել ի հարճութիւնը Արտաշիսի»: (Խորէն. Գ. Բ. գլ. ԾԱ):** [Վերոհիշյալ արտահայտության մեկնաբանությունը]: 1915, էջ 241—246:

**7187. ՍՏԱՅՈՒԱԾ գրքեր:** [Ցանկ]: 1915, № 1—6, շապիկների դարձերեսները:

**7188. Վ. Տ. Յ.:—Х. Кучукь—Иоаннесовь. Краткий очерк армянской литературы V века. Москва. 1914.** [Գրախոսություն]: 1915, էջ 254:

**7189. ՎԱՀԱՆ վարդապետ Տէր-Գրիգորեան:** [Էջմիածնի միաբանության անդամ: Մահախոսական]: 1915, էջ 547—550:

**7190. ՎԱՆԻ գրամման առթիւ եղած շնորհաւորական հեռագիրներ:** 1915, էջ 415—416:

Բովանդ.՝ **Գէորգ Ե կաթողիկոս Ամենայն Հայոց:—Նորին Պայծառափայլութեան Կովկասի զօրաբանակի գլխաւոր հրամանատար գեներալ ադիւտանտ, կոմս Իլարիոն Իվիոնովիչ Վարանցով-Դաշկովին:** [Նույն տեղում պատասխան հեռագիրը]:—**Զորրորդ բանակի հրամանատար Ինֆանտերիայի գեներալ Պեօտր Իվանովիչ Օգանովսկուն:** [Նույն տեղում՝ պատասխան հեռագիրը]:

**7191. ՎԱՆԻ շրջանային վարչութեան դիմումը հայ ժողովրդին:** [Օգնության հասնել իրենց շրջանի ծով կարիքներին՝ ով ինչով կարող է]: 1915, էջ 457—460:

Ստորագր.՝ **Վանի նահանգապետ:—Վանի շրջանային վարչութիւն:**

**7192. ՎԱՐԱՆՑՈՎ ԴԱՇԿՈՎ ԿՈՄՍ—ՓՈԽԱՐՔԱ ԿՈՎԿԱՍԻ, Էջմիածին: Նորին Սրբութիւն Ծայրագոյն Պատրիարքի եւ կաթողիկոսի Ամենայն Հայոց:** [Պատասխան հեռագիր կաթողիկոսի անձագանգին: Եղեռնի առթիվ]: 1915, էջ 176:

**7193. ՎԱՐԱՆՑՈՎ ԴԱՇԿՈՎ:—Հրաժեշտի ողջոյն:—Նորին Կայսերական մեծութեան Կովկասի փոխարքա կոմս Վարանցով Դաշկովի:** [Փոխարքայի պարտականություններից ազատվելու առթիվ]: 1915, էջ 678—679:

**7194. ՏԱՐԵԿԱՆ հաշիւ ուսումնական մասի Շըրվենանց գիւղի Հայոց եկեղեցական ծխական երկդասեան, երկսեռ «Գ. Յ. Տէր-Մարգարեան» դպրոցի 1914—1915 ամի:** 1915, էջ 607—612:

**7195. ՏԵՂԵԿԱԳԻՐ: Մեղրու վեցամեայ ծխական դպրոցի 1914—15 ուս. տարույ:** 1915, էջ 612—615:

**7196. ՏԷՐ-ՄԻՔԱՅԵԼԵԱՆ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ:—Տէրունի տօներ:** [Քարոզ]: 1915, էջ 13—16:

Ստորագր.՝ Ն. վ. Տ. Մ.:

**7197. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆ ՎԱՂԻՆԱԿ:—Записки Кавказск. Отдела Имп. Русск. Геогр. Общества. Кн. XXVIII, вып. 4. Е. А. Лалаян, Айсоры Ванско-**

го вилайета, Тифлись, 1914. [Գրախոսական]: 1915,
էջ 410—412:

7198. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆ ՎԱՂԻՆԱԿ:—Լէօ: Վանի թագաւորութիւնը: Մի դրուագ Հայաստանի պատմութիւնից: 2 քարտէզ, 22 նկար: Թիֆլիս, 1915: [Գրախոսական]: 1915, էջ 920—924:

7199. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆ ՎԱՂԻՆԱԿ:—Ցուցակ Երհայերէն ձեռագրաց Վասպուրականի: Կազմեց Եր... հրատարակութիւն Հայոց ազգագրական Ընկերութեան: Պրակ առաջին: 1915, Թիֆլիս: [Գրախօսական]: 1915, էջ 501—504:

7200. ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ Գր.:—Օրանաւորը չէրքեզախոս հայերի անցեալի մասին:—Հայրենիքը և գաղթը: 1915, էջ 205—211, 365—381:

7201. ՕՏԱՐ եկեղեցիներ: Անգլիական եկեղեցի: 1915, էջ 136—137, 298—301, 452, 559—561:

7202. ՕՏԱՐ եկեղեցիներ: Կաթոլիկ եկեղեցի: 1915, էջ 23—24, 204—298, 450—451, 734—737:

7203. ՕՏԱՐ եկեղեցիներ: Ռուսաց եկեղեցի: 1915, էջ 20—23, 234—236, 293—294, 447—450, 553—559, 732—734:

7204. ՖՐԱՆՍԻԱՑԻՆԵՐԻ կոչը հայերին օգնելու համար: 1915, էջ 859—860:

...ստորագրություններ՝ Ա... Ֆռանս, Վիկտոր Պերար, և այլոց:

# 1916

7205. ԱՄԵՆԱՅՆ Հայոց Հայրապետի հովուական այցը: [Թիֆլիս. պաշտոնական տեսակցություններ, ընդունելություններ, Մայր Աթոռ վերադարձի նկարագիրը]: 1916, էջ 484—548:

Նույն տեղում՝ Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգայ Ամենայն Հայոց կաթողիկոսի հինգերորդ տարեդարձի առթիվ՝ Թիֆլիսի հայ ազգային հաստատությունների կողմից: Ուղերձ: Էջ 528—529:

7296. ԱՄԵՐԻԿԱՆ եւ հայերը: [Ամերիկայում «Հայանպաստ հանձնաժողով» կազմելու մասին]: 1916, էջ 231—232:

7207. «ԱՐԱՐԱՏ»-ի խմբագրութիւնից: [Խմբագրության աշխատանքների մասին]: 1916, էջ 608-ից հետո, № 7—8, շպկ. էջ 3:

7208. ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ դպրոցական հարցերի: [Հոգևոր դպրոցի շրջանավարտների համալսարան ընդունվելու պայմանների մասին]: 1916, էջ 682—687:

Նաև՝ վիճակագրական թեմական դպրոցների և աշակերտների վերաբերյալ:

7209. ԲԻՆՕՆ ՐԸՆԷ Մ.:—Հայերի բնաջնջումը: Գերմանական մեթոդ—Թիւրքական գործ: Թարգմ. Տիրայր վարդապետի: 1916, էջ 65—86, 233—260:

Հեղինակի անունը՝ տողատակից:

7210. ԲԻՒԶԱՆԴԱԿԱՆ կայսրերից մեկը [Բագեկիոս Էմմանուել] Լոնդոնում եւ Փարիզում: [1399 թվին քաղաքական նկատառումներով]: Թարգմ. ռուս.՝ Մելիք: 1916, էջ 720—726:

Հոդվածը հյուսված է Գյուստավ Շլումբերժեի ուսումնասիրության հիման վրա:

7211. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ 1916 թ. «Արարատ»-ի նիւթերի ցանկը: 1916, էջ 947—949:

7212. ԲՐԱՅՍ ՋԵՅՄՍ:—Հայկական կոտորածներ: Խոսած է լորդ Ջեյմս Բրայս լորդերի պալատի մէջ: Թարգմ. անգլ.՝ Ղեւոնդ վարդապետ Մարդուկէսեան: 1916, էջ 87—95:

7213. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—(Ալուպկա, Նորին պայծառափայլութեան ստատս-Տիկին կոմսուհի Ելիսաւետա Անդրէևնա Վորոնցով-Դաշկովային): [Ցավակցական հեռագիր կոմս Ի. Ե. Վորոնցով-Դաշկովի մահվան առթիվ]: 1916, էջ 38:

Նույն տեղում՝ պատասխան հեռագիրը:

7214. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ: [ԱՄՆ-ի եպիսկոպոսական եկեղեցու առաջնորդներին, Ամերիկայի հայությանը ցույց տրված ասպնջականության և արևմտահայության նահատակության առթիվ կազմակերպված օգնության համար]: 1916, էջ 163—166:

7215. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ: [Անգլիական ավագների խորհրդարանի անդամ, հայասեր լորդ Ջեյմս Բրայսին արևմտահայության տառապանքների առթիվ թուրքական կառավարության դեմ հրապարակային բողոք հայտնելու համար]: 1916, էջ 313—314:

7216. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ: [Հայկական Բարեգործական ընկերության հիմնադիր, բժիշկ Բագրատ Նավասարդյանին, ընկերության ազգօգուտ և հայրենասիրական գործունեության առթիվ]: 1916, էջ 451—454:

7217. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ: [Հնդկաստանի Սինգապուրի ազգային-եկեղեցական մարմիններին և տեղի հայությանը, Եգիպտոսի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանին հայրապետական պատվիրակի նշանակում ի նպաստ գաղթականության և հօգուտ Հայաստանի վերաշինության հանգանակություններ կատարելու համար]: 1916, էջ 166—170:

7218. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ: [Շուշեցի Պողոս, Արշակ, Հակոբ, Աբրահամ Հովսեփյան, Ղուկասյան եղբայրների անունով Շուշի քաղաքում «Մարիամ-Ղուկասյան» օրիորդաց դպրոց բացելու առթիվ: Նաև՝ 12 կետից բաղկացած Հիմնական կանոններ Շուշի քաղաքում հիմնելիք Մարիամ-Ղուկասյան օրիորդաց դպրոցի]: 1916, էջ 308—312:

7219. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակներ Նորին Վեհափառութեան: 1916, էջ 163—170, 307—314, 451—454:

7220. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոչոր: Նորին կայսերական բարձրութեան օգոստոսափառ փոխարքային: Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաեւիչին: [Հեռագիր: Երզնկայի գրավման առթիվ]: 1916, էջ 525:

Նույն տեղում՝ պատասխան հեռագիրը:

ՌՈՄԱՆՈՎ ՆԻԿՈԼԱՅ Ն.—գեներալ ադիւտանտ: Թիֆլիս: Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե-ին: [Հեռագիր: Երզնկայի գրավման առթիվ]: 1916, էջ 252:

7221. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կովկասյան գործող բանակ: [Հեռագիր Տրապիզոնի գրավման առթիվ]: 1916, էջ 217:

Նույն տեղում՝ պատասխան հեռագիրը:

7222. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Նորին Վեհափառութեան տնօրէնութիւններից: 1916, էջ 3—27, 170—200, 315—324, 454—467, 611—634, 771—796:

7223. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Տփխիս: Նորին կայսերական մեծութեան Կովկասեան փոխարքա, բանակի գլխավոր հրամանատար մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաեւիչին: [Հեռագիր: Տրապիզոնի գրավման առթիվ]: 1916, էջ 215—216:

7224. [ԳԵՎՈՐԳ Ե:—Արտոնագիր Երվանդ Լալայանին՝ նկարագրելու և նկարելու հայոց բոլոր վանքերը, եկեղեցիները և նրանց մեջ եղած պատմական նշանակություն ունեցող հնությունները]: 1916, էջ 630:

**7225. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Բագրատ եպիսկոպոսին և Գարեգին ծ. վարդապետ Հովսեփյանին, որպես հայ հոգևորականության ներկայացուցիչներ մասնակցելու Կովկասում «Զեմստվո» մտցնելու ժողովի նիստերին]: 1916, էջ 319:

**7226. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Գրությամբ Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրանոցին ուղարկվեց կաթողիկոսի կողմից հաստատված, կայսերական, ազգային և եկեղեցական տոների և արձակուրդների ցուցակի՝ հրահանգությունն]: 1916, էջ 789:

**7227. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Գրություն Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետին, Ղազարապատ գյուղում գտնված երկու գրչագիր Ավետարանը Էջմիածին ուղարկելու մասին]: 1916, էջ 185:

**7228. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Գրություն Աղթամարի միաբան Դանիել վարդապետ Ջաղոյանին, Սմբատ Տեր-Ավետիսյանի ձեռքով ուղարկած 84 ձեռագրերը ստանալու և Էջմիածնի մատենադարանում ժամանակավորապես պահելու համար]: 1916, էջ 195:

**7229. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Գրություն Ամերիկայի հայոց առաջնորդ Արսեն վարդապետ Վեհունուն՝ անաղարտ պահելու հայ եկեղեցու արարողությունները]: 1916, էջ 626:

**7230. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Գրություն Սատրախանի հայոց թեմի առաջնորդին՝ Աֆանասևսկի Պոստիկ հայկական գյուղում հայոց եկեղեցական-ծխական դպրոց բացելու համար]: 1916, էջ 633:

**7231. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Գրություն «Արարատ»-ի խմբագիր Գյուտ աբեղա Տեր-Ղազարյանին, հաստատելու ամսագրի խմբագրական կազմը, որի մեջ մտնում են ճեմարանի ուսուցիչներ՝ Ավետիք Տեր-Պողոսյանը, Լևոն Գյանջեցյանը, Սենեքերիմ Տեր-Հակոբյանը և Արշավիր Շավարշյանը]: 1916, էջ 785:

**7232. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Գրություն՝ Գյուտ աբեղա Տեր-Ղազարյանին «Արարատ»-ի պատասխանատու խմբագիր և տպարանի վարչության անդամ նշանակելու մասին]: 1916, էջ 619:

**7233. [ԳԵՎՈՐԳ Ե:**—Գրություն Գրիգոր Չալխուշյանին՝ նրա ուղարկած դերասան Ադամյանի ձեռնափայտը և մի փոքրիկ յուղաներկ պատկեր ստանալու մասին]: 1916, էջ 625, 629:

